Վերջին օրերի աշխատանքը մահացածների համար

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոն Ա. Վիդսոն (1872–1952) ուսուցանել է հետևյալը Աստծո որդիներին և դուստրերին փրկելու մեր կանխորոշված առաքելության մասին.

«Մեր նախաերկրային կյանքում՝ մեծ խորհրդի օրը մենք որոշակի պայմանագիր ենք կապել Ամենազորի հետ: Տերն իր կողմից հղացած մի ծրագիր է առաջարկել: Մենք ընդունել ենք այն: Քանի որ այդ ծրագիրը նախատեսված էր բոլոր մարդկանց համար, այդ ծրագրի ներքո մենք դառնում ենք յուրաքանչյուր անձի փրկության մասնակիցը: Մենք տեղում համաձայնել ենք լինել ոչ միայն մեր փրկիչները, այլև . . . փրկիչները՝ ողջ մարդկային ընտանիքի: Մենք Տիրոջ հետ գործընկերության մեջ ենք մտել: Այն ժամանակ այդ ծրագրի գործարկումը դարձավ ոչ միայն Հոր աշխատանքը, և Փրկչի աշխատանքը, այլև մեր աշխատանքը: Մեզանից ամենափոքրը, ամենախոնարհը, գործակցում է Ամենազորի հետ, փրկության հավերժական ծրագրի նպատակն իրագործելու համար» (“*The Worth of Souls*,” *Utah Genealogical and Historical Magazine, Oct*. 1934, 189)” (*in Doctrine and Covenants and Church History: Gospel Doctrine Teacher’s Manual* [1999], 173):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խրախուսել է Եկեղեցու երիտասարդներին տաճարային աշխատանք կատարել իրենց նախնիների համար.

Տաճարում կատարված ցանկացած աշխատանք ժամանակի լավ տնօրինում է, սակայն որպես փոխանորդ ձեր իսկ նախնիների համար ծեսեր ստանալը տաճարում անցկացրած այդ ժամանակը էլ ավելի սրբազան է դարձնում և բերում էլ ավելի մեծ օրհնություններ: . . .

Երիտասարդներ, դուք ուզո՞ւմ եք ապահով ուղի՝ ձեր կյանքում թշնամու ազդեցությունը նվազեցնելու համար: Ընկղմվեք ձեր նախնիների հետազոտության մեջ, պատրաստեք նրանց անունները փոխարինողների միջոցով տաճարում մատչելի սրբազան ծեսերի համար, ապա գնացեք տաճար և փոխարինող դարձեք նրանց համար, ստանալով մկրտության ուխտերը և Սուրբ Հոգու պարգևը: . . . Ես չգիտեմ ձեր կյանքում թշնամու ազդեցությունից պաշտպանվելու ավելի մեծ պաշտպանություն» («Մահացածներին փրկագնելու ուրախությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2012, 93–94):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է այդ այլաբանության իմաստը.

«Ես հրավիրում եմ Եկեղեցու երիտասարդներին սովորել Եղիայի Հոգու մասին և զգալ այն: Ես խրախուսում եմ ձեզ սովորել, փնտրել ձեր նախնիներին և պատրաստել ձեր անձերը՝ լինելու փոխանորդ և կատարելու մկրտություններ Տիրոջ տանը *ձեր* մահացած ազգականների համար (տես ՎևՈւ 124.28–36): Եվ ես հորդորում եմ ձեզ օգնել այլ մարդկանց իմանալ իրենց ընտանիքի պատմությունները:

Եթե դուք հավատքով արձագանքեք այս հրավերին, ձեր սրտերը կդառնան դեպի հայրերը: Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված խոստումները կարմատավորվեն ձեր սրտերում: Ձեր հայրապետական օրհնությունները, բացահայտելով ձեր տոհմաբանական գիծը, կկապեն ձեզ այս հայրերի հետ և ավելի իմաստալից կդառնան ձեր համար: Ձեր սերն ու երախտագիտությունը ձեր նախնիների հանդեպ կմեծանան: Փրկչի մասին ձեր վկայությունը և դարձի ընթացքը կդառնան ավելի խորը ու հաստատուն: Եվ ես խոստանում եմ, որ դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից: Մինչ դուք մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք պաշտպանված կլինեք ձեր երիտասարդության տարիներին և ձեր ողջ կյանքի ընթացքում» («Ջավակների սրտերը պետք է դառնան», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2011, 26–27):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐՈՒՄՎԱԾ ԵՆ